ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ,
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՌՅԽԶ Լ. ՏԱՐԻ | ՀԱՄԱՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ | ՄԱՅԻՍ 1897 Թ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԻ ԳԵՐԱԿԱՅ ԳԱՂԱՓԱՐԸ.

Զի ոչ այլով իւիք փրկութիւն, զի եւ ոչ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ՝ որով արժան իցէ կեալ մեզ:

Գործք. Դ. 12:

Իւրաքանչիւր անհատ, հասարակութիւն կամ ազգ իւր գերակայ գաղափարն ունի: Գերակայ գաղափարն այն լուսաւոր նպատակն է, որին ձգտել է կամենում անհատը, հասարակութիւնը կամ ազգը: Գերակայ գաղափարը կարող է երբեմն սխալ լինել, բայց եւ այնպէս լաւ է սխալ գերակայ ունենալ, քան առանց գերակայի լինել: Առանց գերակայի կեանքը մեռելութիւն, անիմաստ դատարկութիւն կլինէր: Իրականութիւնն ու գերակայ գաղափարները իրարից շատ հեռու են ի հարկէ, բայց մարդկութեան սուրբ ձգտումն ու նպատակն է եղել այդ անդունդի վերայ մի հաստատուն կամուրջ ձգել: Մեր կեանքն անխորհուրդ կլինէր, մի անլոյս լապտեր կըդառնար առանց այդ ձգտման:

Գերակայ գաղափարները զանազան են. արուեստի մէջ, օրինակ, գեղեցկութիւնն է, գիտութեան մէջ՝ ճշմարտութիւնը, բայց ամենաբարձր գերականն, որ մարդկային ձգտման

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԻՑ ՈՒՏԵԼԵՂԷՆՆԵՐ

100 մասում բովանդակում է	ընտանյութ. g.	ճարպ. g.	օսլա. g.	գինը
Ձուն	12·5	12·0	—	[illegible]
Տաւարի միսը	21·0	5·5	—	
Խոզի միսը	20·5	7·0	—	
Խոզի ապուխտը	23·9	36·4	—	
Հորթի միսը	20·0	1·5	—	
Լերդ ու թոքը	19·4	5·4	2·0	
Ոչխարի միսը	17·0	10·0	—	
Սագը	16·0	40·0	—	
Հաւը	17·5	1·4	—	
Աղաւնին	18·5	1·0	—	
Արուեստ. մսի փոշին	73·0	—	7·0	
Կովի կաթը (սերով)	3·5	4·0	4·9	
» » (ս. հան.)	3·1	0·7	4·8	
« իւղը	0·7	84·4	0·6	
Թանը	3·4	1·0	5·0	
Մարգարինը և այլն	0·4	87·0	0·0	

ԲՈՒՍԱԿ. ԹԱԳ. ՈՒՏԵԼԵՂԷՆՆԵՐ.

100 մասում բովանդակում է	ընտանյութ. g.	ճարպ. g.	օսլա. g.	գինը
Հաճարի հացը	6·0	0·5	47·0	
» ալիւրը	11·5	2·0	69·5	
Սպիտակ հացը	6·0	0·5	49·0	
Ցորենի ալիւրը	11·0	1·2	71·0	
Կորեկը	11·3	3·5	67·3	
Ոսպը	24·8	1·8	54·7	
Կաղամբը	1·9	0·2	4·8	
Խնձորը (չաքարած)	0·4	0·8	12·0	
Տանձը (չաքարած)	0·4	0·2	12·0	
Շլորը (չաքարած)	0·8	0·8	11·0	
Ծիրանը (չաքարած)	0·5	1·2	11·0	
Սպանախը	2·0	0·3	6·0	
Մանանխը	28·5	35·5	25·9	
Ղահուէն	14·5	12·5	18·5	
Շաքարը	—	—	90·0	
Շլորի չիրը և այլն	3·3	0·9	45·0	

100 մասում բովանդակում է	ընտանյութ g.	ալկոհոլ. g.	օսլա (շաքար, մրգաթթու, մոխիր). g.	գինը
Շոեմարանի գարեջուր	0·49	3·68	6·7	
Գորշ «	0·5	—	8·0	

Բայց պէտք է յուսանք, որ մեր մասնագէտները կը հոգան այսպիսի մի լիակատար ցուցակ կազմել մեր տեղական ուտելեղէնների և խմիչքների համար. գերմանացին զանազան Wurst-եր (երշիկներ) է ուտում, իսկ մենք՝ խաւեար, դոշ, գուրգիէլ. նոցա ձկները, նոցա պանիրները այլազան են, քան մերը. նոքա խմում են գարեջուր, մենք՝ գինի, օղի, թէյ և այլն: Ուրեմն նոցա տախտակները մեզ չեն օգտի:

Ս. Մ.

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ.

ԺԹ. ԴԱՐՈՒՄ:

Ա. շրջան 1839—1874:

Տիրացու Բաբա Համբարձում Սարգսեան (1768—1839).—Հայոց արդի ձայնանիշների գիւտն ու զարգացումը.—Երաժշտական ժողովներ Կ. Պոլսում.—Լիմոնճեան միջոց (1864—1873).—Տարակոյսը ձայնագրեալ առաջին փորձեր:—

Տիրացու Բաբա Համբարձումի ծնողները Խարբերդցի էին: Հայրը՝ Սարգիսը, քաղաքի հարստահարիչ հարկահաններից ձեռքից ազատուելու համար, ընտանիքն առած Կ. Պոլիս է տեղափոխուում. այստեղ 1768-ին ծնուում է Համբարձումը: Երբ մեծանում է, հայրը նորան դերձակութեան է տալիս. նա յաջողութեամբ սովորում է այդ արհեստը, բայց քիչ յետոյ, ժամանակի նշանաւոր հայ ճարտարապետի՝ Գրիգոր ամիրայ Պալեանի մօտ գրագրութեան պաշտօն է ստանում:

Դարուս Հայոց եկեղեցական երաժշտութեան մէջ Համբարձումը յայտնի է իբրև մի տաղանդաւոր Տիրացու.[1] երբ հասակն առնում է, Բաբա մակդիրն էլ է աւելանում, ուստի Տիրացու Բաբա Համբարձում է կոչւում: Նա յաջող ձայն և երաժշտական մեծ ընդունակութիւն ունէր. նուագում էր թամբուր. քաջ տեղեակ էր արևելեան բազմածիւղ եղանակներին և բազմատեսակ ամանակներին, որ ունել էր թիւրք դէրվիշ երաժիշտներից. հմուտ էր Յունաց եկեղեցական խազերին և երաժշտութեան: Հայոց եկեղեցական երգեցողութիւնը սովորում է նա, ըստ ոմանց, Զէնճէ մականուանեալ ամուսնաւոր սարկաւագ Պօղոս վարժապետից (1646—1726) (ամենայն Հայոց բանաստեղծ կաթուղիկոսի՝ Հանգուցեալ Ներսէս Պատրիարք Վարժապետեանի պապը). սա անհնարին սխալ է, որովհետև Համբարձումը ծնուել է 1778-ին՝ ուրեմն վարժապետի մեռնելուցը յետոյ. իսկ ըստ ոմանց՝ Մասխալաճի կոչուած մի հայ երաժշտից. թուի թէ ծանօթ էր և Եւրոպական երաժշտութեանը:

Դիւզեան Յովհաննէս Չէլէբին նկատում է տիրացու Բաբա Համբարձումի երաժշտական ընդունակութիւնը և առնում է իւր հովանու տակ, մինչև իսկ բնակարան յատկացնում իւր պալատում: Այդ միջոցին, Ղալաթիոյ լատինաց Ս. Գէորգ եկեղեցու բակում «լուսաւորչեան դպրոց» է բացուում. Յովհաննէս

[1] Տիրացու էին կոչում եկեղեցական երաժիշտները:

Զելէրին տիրացու Բարա Համբարձումն ելեկեցեցական երգեցողութեան դասատու է. նշանակել տալիս այդտեղ: Համբարձումը շարթնական երկու դաս է տալիս և, շատ շուտ, մեծ հռչակ է ստանում իւր դասատուութեան նոր ոճով:

Երկար փորձառութիւնը նորա մտքում յղացնում է այն միտքը, թէ՝ անհրաժեշտ է ձայնանիշ ունենալ շարականի երգեցողութիւնը դիւրացնելու և հոգևոր երգերն անկորուստ պահպանելու համար: Շատ չէ՝ անցնում միտքը իրագործում է. հնարում է արդի ձայնանիշներն ու ամանակները 1839-ին, մահից մի քանի ամիս առաջ, իսկ թերին լրացնում են աշակերտները, Եւրոպական երաժշտութեան հետևողութեամբ, մասամբ նորա կենդանութեան ժամանակ, մասամբ մահից յետոյ: Կարծիք կայ, իբր թէ նախքան Համբարձումը կային այդ ձայնանիշները և պահվում էին Դիւդեանների մօտ, որտեղից Համբարձումի ձեռքն են անցնում և նա մշակում ու հրատարակ է հանում: Բայց հաւանական չէ. ժամանակակից ականատես անձինք այդ դիւտի պատիւը միաբերան վերագրում են իրաւամբ նորան:

Տիրացու Բարա Համբարձումը ձայնանիշների և ամանակների ձևն առնում է հայկական հին խազերից, բայց արաբական անուններ է դնում. որովհետև իւր փորձերն էլ կատարում էր տաճիկ—արաբական նուագարանի՝ Թամբուրի վերայ, ուր ամէն լար իւր յատուկ արաբերէն անունն ունի: Հայկական անուանադրութիւնը արդէն աւելի ուշ ժամանակի և նորա աշակերտների գործն է:

Սոքա շուտով նկատեցին ձայնանիշների բազմազանակ անունների անյարմարութիւնը, ուստի կրճատելով թողին միայն առաջին վանկը: Անունների կրճատումն առաջ բերաւ նոր փոփոխութիւններ. ոմանք Եւրոպական անուններն սկսեցին գործածել. Եղիա Տատեանը (+1881) ré-ի տեղ բա, la-ի տեղ լի և այլն փոխելն էր առաջարկում, իսկ ոմանք փորձեցին ձայնաւոր տառերով կոչել: (Այսպիսի խառնաշփոթութեան ժամանակ Ցաճիկներն էլ Օսմանլը նօթասը՝ Օսմանեան ձայնանիշ հրատարակեցին, առանց մտադրութեան, թէ աջից ձախ գրուող խոտորկոտոր գրերին ձախից աջ շարուած ձայնանիշները յարմարել չեն կարող):

Ամանակների կամ տեւողական նշանների թերին լրացնում է Բարա Համբարձումի աշակերտներից Արիստակէս Յովհաննիսեանը՝ (+1878) այսինքն 4/4, 5/32 և 5/64 ամանակները: Թէ ով է յարմարացրել ամանակների հայկական անուանադրութիւնը, չգիտենք: Համբարձում Բարան տաճիկ—արաբական դիում, թէք, թէքէ, թէկէք, բէսրէ և այլն անուններովն էր սովորեցնում այն դանդաղութեամբ, որ նոցա երաժշտական տաղաչափութեան մէջ աջ և ձախ ձեռքերի վեր ու վայր ծնկատրոփ շարժողութեամբ է բաղխումները միմանցից որոշուում, իսկ նա տաքի, ձեռքի և մատների վեր ու վայր բաղման վերածեց, որն և անուանում էր դիում-թէք. ամանակների հայկական անուանակոչութիւնը, թուերի վերածելը՝ բան Եւրոպացիներ, նորա աշակերտներից է մեացել: Բարա Համբարձումի տեւողական նշաններն այն յարմարութիւնն ու առաւելութիւնն ունէին արևելեան երաժշտական տաղաչափութեան նկատմամբ որ տաճկական կնճռոտ ուսուցների ամանակների գործադրութեան ըմբռնումը միանգամայն հեշտացաւ. բոլոր ուսուցները նա վերածեց մի բաղխման արժէքի: Այս գրութեամբ աւելորդ եղան տաճիկ—արաբական բազմանուն, խառնաշփոթ, անգործնական և անհեթեթ Սէմսի, Աղը Սէմսի, Դէմրիրէվան, Զէնջիր, Արասաբ, Արասաբ Քէբիր, Զարբիքէթ, Փանթէ, Դիրէբ, Մուսամմէզ, Զէմբէր, Դէվրի Քէբիր, Բէբէվշան, Ուրիբ Սէմսի, Էվասէթ, Հաֆիֆ, Սարիբ, Զիֆթէ Դիրէբ, Նիմ Սարիբ, Նիմ Դէվիր, Բէմել, Էֆէբ, Հէզէջ, Փրէնգիֆէբ, Սօֆիան և այլն, և այլն, կոչուած հազար ու միանգամայն չափերի անուններով աշակերտների գլուխներն ուռցնելը:

Ձայների զօրութեան արտայայտիչ նշանները (<, >, ^, ~ և այլն) աւելացրին Բարա Համբարձումի աշակերտները՝ գլխաւորապէս Արիստակէս Յովհաննիսեանը և սորա աշակերտ տիրացու Դարբիկ Երանեանը (+1860): Տիրացու Դարբիկը Եւրոպական ձայնագրութեան տարերքին առաւել ծանօթ էր, քան ժամանակակից տիրացու երաժշտները. սա էր ազգային երգերի տարածման մեծագոյն նպաստաւոր, ուստի ժողովուրդը նորան Նօթաչի հռչակեց:

Չնաեղում ենք այդ բոլորի համեմատական ցանկը ներքևում. որովհետև Եւրոպական ձայնանիշների կարգադրան առ ձեռն չունինք, ուստի, ձայնելիէջի կիսաձայնական գրութիւնը որոշակի պատկերացնելու համար, գործածեցինք լատինական տառերը, որոնք ընդհանուր են: Փակագծերի մէջ առնուածները չեն համաձայնում ձայնասանդանով. արևմտեան F և Fis ձայները մի քիչ ցած, իսկ Ais և H-e բարձր են արևելեան Արաբ,

Գէվէշտ եւ Քիւրդի՛ Սիգեահ ձայնաստիճաններից. այդ պատճառով E, F և H, C-ի արեւելեան ձայնաստիճանի մէջ մտնում են Աջէմ և Փուսելիք կիսաձայները: Այսպէս արեւելեան ութնեակը բաժանւում է երկու քառեակի, որոնց մէջ կիսաձայների աստիճանը հաւասարաչափ ելնում և իջնում է:

Ուրեմն արեւելեան կիսաձայնական եղելէջն ութնեակի մէջ պարունակում է 15, իսկ արեւմտեանը՝ 13 կիսաձայն, որովհետև Եւրոպականում Eis = F-ին և His=C-ին: Արտաքինը մինչև անգամ քառորդ ձայն և քառորդ ձայնական աստիճանով եղելէջ ունի:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԿԻՍԱՁԱՅՆ ԵՂԵՒԷՋ.

Թիւ	Նշ.	Տաճկ. անուն.	Հայկական անուն.	Համառօտ.	Եւրոպական.	Տառ.	Տնտեսական.	Լատին.
1.	[illegible]	Երգեահ	Փուշ.	Փօ.	Ré.	Ա.	բա.	D.
2.	[illegible]	Փէս Հիսար	Փուշ կիսվեր.	Փօ կիսվեր	Ré dièse.	—	—	Dis.
3.	[illegible]	Աշիրան.	Էկարճ.	Է.	Mi.	Ե.	—	E.
4.	[illegible]	Փէս Աջէմ.	Էկարճ կիսվեր.	Է կիսվեր.	Mi dièse).	—	—	(Eis).
5.	[illegible]	Արաք.	Վերնախաղ.	Վէ.	Fa).	Է.	—	(F).
6.	[illegible]	Գէվէշտ.	Վերնախաղ կիսվեր	Վէ կիսվեր	(Fa dièse).	—	—	(Fis).
7.	[illegible]	Ռաստ.	Բննկարճ.	Բէ.	Sol.	Ը.	—	G.
8.	[illegible]	Զէրգիւլէ.	Բննկարճ կիսվեր.	Բէ կիսվեր	(Sol dièse).	—	—	Gis.
9.	[illegible]	Դիւգեահ.	Խաղաղային.	Խօ.	La.	Ի.	կի.	A.
10.	[illegible]	Քիւրդի.	Խաղաղային կիսվեր.	Խօ կիսվեր	(La dièse).	—	—	(Ais).
11.	[illegible]	Սիգեահ.	Ներքնախաղ.	Նէ.	Si).	Ո.	—	(H).
12.	[illegible]	Փուսելիք.	Ներքնախաղ կիսվեր.	Նէ կիսվեր	(Si dièse).	—	—	(His).
13.	[illegible]	Չարգեահ.	Պարոյկ.	Պա.	Do.	Օ.	—	C.
14.	[illegible]	Հիջազ.	Պարոյկ կիսվեր.	Պա կիսվեր	Do dièse.	—	—	Cis.
15.	[illegible]	Նէվա.	Փուշ.	Փօ.	Ré.	Ա.	բա.	D.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՈՒԹՆԵԱԿՆԵՐԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Արեւելեան. 1. $^{9}/_{8}$. $^{5}/_{4}$. $^{11}/_{8}$. $^{3}/_{2}$. $^{5}/_{3}$. $^{11}/_{6}$. 2.
Արեւմտեան. 1. $^{9}/_{8}$. $^{5}/_{4}$. $^{4}/_{3}$. $^{3}/_{2}$. $^{5}/_{3}$. $^{15}/_{8}$. 2.
C. D. E. F. G. A. H. C.

Տիրացու Համբարձումն ու աշակերտները Հայկական ձայնագրութիւնն արդէն գրել կարդալու չափ մշակել էին, երբ նորա աշակերտները զանազան ուղղութիւնների սկսեցին հետեւել և եկեղեցական երաժշտութիւնը փոխանակ մշակելու և պարզելու, խառնեցին ու պղտորեցին: Տիրացու Համբարձումի անդրանիկ աշակերտներից Գեորգ Չէօմլէքչեանն ու սորա աշակերտները սկսեցին մեծ ջանք թափել տաճկական մեղկ եղանակները մեր եկեղեցական երաժշտութեան մէջ մուծելու համար: Դժբաղդաբար, գրեթէ բոլոր ձայնագէտները նորա շեղ և խորթ ուղին էին բռնել: Ոմանք, դեռ եւրոպական ձայնագրութեան հիմնական տարրերը չըմբռնած, արեւմտեան երաժշտական ոգի ուզեցին ներշնչել հոգեւոր երգերին: Մի քանիսն էլ առաջարկում էին յունաց եկեղեցական երաժշտութեամբ հայկականը սրբագրել:

Մինչդեռ Հայոց եկեղեցական երաժշտութիւնը մի շարք երաժիշտ և իմաստակ տիրացուների ճաշակի կամ կրքի խաղալիք էր դարձել, Կ. Պոլսից Հայոց Պատրիարքարանը ազգային եղանակները մօտալուտ կորստից ազատելու համար գործի գլուխ անցաւ: Այս բարի ձգտումն իրագործելու և գործին ուղիղ ընթացք տալու համար, հարկ համարուեցաւ, որ Կ. Պոլսի բազմակարծիք և ինքնահաւան տիրացուներից մի յանձնաժողով գումարուի: Պատրիարքարանը գործի ղեկավարութիւնը յանձնեց Ուսումնական խորհրդին:

Ուսումնական խորհուրդը, 1864-ին, սեպտեմբերի 25-ին հրաւիրաթղթեր ուղարկեց բոլոր տիրացուներին, որով խնդրում էր, առաջիկայ կիւրակէին՝ հոկտեմբերի 2-ին, Ղալաթիոյ (Կ. Պոլսոյ թաղ) Հայոց եկեղեցու սենեակներից մէկում մի երաժշտական ժողով գումարելով Հայոց եկեղեցական եղանակների կարգաւորութեան մասին հոգալ: Բայց Կ. Պոլսոյ բազմատեսակ տիրացուներից երկուսն են միայն ներկայանում՝ Արիստակէս Յովհաննիսեան և Եղիա Տնտեսեան, որոնք աւանդապահ և անուանաւոր երաժիշտ տիրացուներ էին: Ժողովը տեղի չէ ունենում: Մի երկրորդ հրաւիրաթուղթ է առաքւում 1864-ին դեկտեմբերի 8-ին, որով տիրացուներին հրաւիրում են Ազգային կրօնական ժողովին ներկայանալու: Այս անգամ արդէն մեծամասնութիւնը բարեհաճում է գալ: Այստեղ որոշում են, որ տիրացու երաժիշտները մի մասնաժողով կազմեն և եկեղեցական եղանակները բա-

ընկազմելու հող տանեն։ Քուէարկութեամբ ընտրում են մատնաժողովի համար անդամներ. բայց առաջին խօսք նիստից յետոյ ժողովը խափանուում է և անդամները ցրուում են անմիջապէս։

Այս անյաջողութիւնն աւելի եւս խրախուսեց տիրացուների կամայականութիւնն ու երևակայութիւնը։ Անյաջողութեան հետևանքը մի նոր հոսանք յառաջ բերեց.— անհատական ճաշակի երաժշտութեան հոսանք։ Ժողովրդական բազմաթիւ մեղեդիներ, տաղեր, Տէր — ողորմեա՛ներ, Ամէն և ընդ հոգւոյդ քում՛ներ, Քրիստոս պատարագեալ՚ներ, մի խօսքով տաճկական Տարքի, Թիւրքի, Մանի, Նանի եղանակներով պատարագի արարողութիւններ, ծաղկագիր տետրակներով հոգածութեամբ գրուած, իւրաքանչիւր իւրն իբրև երաժշտագէտ համարող տիրացուի կողմից աշակերտներին և երգեցիկ մանուկներին իբր անգին գանձ, աւանդ տրուեցաւ, որոնց նմուշներն այսօր էլ երգուում են Տաճկահայաստանի բոլոր վայրերում՝ մայրաքաղաքից սկսած մինչև վերջին գիւղական եկեղեցիները։

Մենք անձամբ ճանաչում ենք այդ ողորմելի շրջանի ներկայացուցիչներից շատերին։ Սոցանից մէկը Բ... քաղաքի տիրացուն, գերապատիւ առաջնորդի բարձանքով, մի նոր պատարագի արարողութիւն էր գրել, որը և մեզ ցոյց տուեց պարծանքով՝ իւր սին հանճարով ոգևորուած։ Այս խղճուկ պատարագի երգեցողութիւնից ահա մի քանի նմուշ յառաջ ենք բերում.

Չարգեաւ.

Մանր.





Մանր.



բ. ակ. ո զո բ մեա

քի զ տեա ունդ յանձն և դի-

ցուք ակ ո զո բ մեա ակ ո -

զոր մեա ։

Ահա այս շրջանի եկեղեցական երաժշտութիւնն աչքի է ընկնում իւր անճաշակ, եթէ չասենք անհամեստ, գոնէ խառնիխուռն, երաժշտական աւիւնից խապառ զուրկ ձայնանիշների կուտակումով. այլ ևս չենք ասում եղանակի և բառերի ներքին իմաստի կատարեալ անհամաձայնութեան մասին. մինչդեռ խօսքերը մարդկութեան Փրկչի և եկեղեցու Մեծ Վարդապետի կենաց ամենանուիրական բովէներից մէկն են պատկերացնում և հաւատացեալին փրկութեան հաղորդակից լինելու յորդոր կարդում, եղանակի վերնագիրն (Զարդեամ) արդէն պղտորում է մարդու միտքն ու սիրտը, այն պատկերացմամբ՝ թէ դա արևելեան այն բազմաձիւղ եղանակներից մէկնէ, որ սրճանոցներում, հասարակական կեր ու խում վայրերում է միայն երգուում և ընդունակ է ոգևորելու միայն գուսան—աշուղներին և նոցա առաջ պարողներին։

Սանձարձակ տիրացուների շրջանը տևեց 1864—1873-ը։ Երբ ազգային եկ. երաժշտութեան համար մի նոր շրջան է սկսում։

Մինամեայ ժամանակաշրջանում աւանդապահ տիրացուներն էլ ձեռք զարկին իրանց հաւանած հոգևոր եղանակները ձայնագրելու, որ գոնէ եղածն ազատեն անկոչ տիրացուների ձանկերից։ Այսպէս պէտք է յիշենք, որ խակ տիրացուներին թէ ու թիկունք տուին տեղական առաջնորդներից մի քանիսը։ մանաւանդ Կ. Պոլսոյ պայծառափայլ ամիրաները, էլէպիները և առ հասարակ ունևոր և կարող անհատները, որոնցից ամէն մէկը մի մի տիրացուի հովանաւորում կերակրում էր, ուստի եկեղեցական եղանակները մէկին հազար պատուում։

Շարականը ձայնագրելու առաջին փորձն արաւ երաժիշտ տիրացու Բաբա Համբարձումը իւր նոր հնարած ձայնանիշներով 1839 թուին։ ձայնագրեց մինչև ս. Զատիկ օրհնութիւնը «Այսօր յարեաւ»-ը, բայց վերահաս մահը գործն ընդհատեց։ կարճ ժամանակից յետոյ ձայնագրածներն էլ անյայտացան։ Երկրորդ փորձն արել է երաժիշտ Եղիա Ծերանեանը և աւարտել 1870-ին։ Երրորդ ձայնագրողն է Համբարձում Զէրչեանը, որ ցարդ Արմաշու դպրեվանքում դաս է տալիս եկեղեցական երգեցողութիւն և ձայնագրութիւն։ սրա մասին գրում է Եղիա Ծերանեանը։ «Այս գործին ուրիշներ ոչ կարելի է ձեռնարկած լլան, բայց ասենցմէ՝ հանգուցեալ Պալեան Կարապետ ամիրայի սատարութեամբ ձայնագրբաձը միայն ծանօթ է մեզ։ որ թէ և մեծ գործ մ'է, սակայն մէկ երգողի, մէկ ձայնագրողի՝ այսինքն երկու կարծիք է։ և չունի այն քննական ուղղութիւնը, որ անհրաժեշտ է այսպիսի ձեռնարկութեան մը համար։ միանգամայն՝ ինչպէս կնշմարուի, ձայնագրողը քիչ շատ յանդուգն փորձեր բրած է՝ մեր եղանակները տաճկականին վերայ սրբագրելու։ Այս կարծիքին համաձայն ենք։ մեր ձեռքումն էլ կան նորա ձայնագրութեան կանոնատետրից էական քաղուածներ, որոնք իրաւունք են տալիս ինչպէս կասենք, Ծերանեանի գրածը հաստատելու։ (Ծեռ այս մասին երկրորդ շրջանի պատմութիւնը)։ Ասում են, թէ Արիստակէս Ցովհաննէսեանն էլ է ձայնագրել, որպէս և գուցէ, ուրիշ տիրացուներ, բայց մեզ յայտնի չեն։

Առաջին շրջանը փակուում է մի երրորդ երաժշտական յանձնաժողովով, որ տեղի ունեցաւ 1873-ին, ապրիլի 22-ին և տևեց երկու տարու չափ՝ մինչև 1875-ի վերջերը։

Յանձնաժողովի առաջին նիստին ներկայ են լինում ընտրուած 14 անդամներն էլ։ երկար վիճաբանութիւնից յետոյ, ոմանք, անձնական կրքերի համար բաւարար անուղղ չգտնելով, հեռանում են անմիջապէս. մընացածները ձայների մեծամասնութեամբ վճռում են քննութեան առնել Եղիա Ծերանեանի ձայնագրած շարականը և հոգևոր երգերն, իրրև առաւել յարմարաւոր գործ, և ապագրութեան հոգսը քաշելու միջոցներ որոնել։ Մեզ յայտնի չէ, թէ ոչ կամ թէ ինչ եղաւ և որի՞ մօտ մնաց այդ գործը. բայց այսքան միայն գիտենք, որ 14 ընտրեալներից շատն է միայն մինչև վերջ շարունակում անդամակցել։

(Շարունակելի)։

Կոմիտաս վարդապետ։